

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

2015 թվականի ընթացքում մարզում իրականացվել է ծրագրեր հետևյալ միջազգային կազմակերպությունների կողմից՝

- Ասիական զարգացման բանկի միջոցներով մարզում ավարտվել է ջրամատակարարման համակարգերի վերակառուցմա ծրագիրը, մարզի 28 համայնքներում վերակառուցվել է խմելու ջրի ներքին ցանցը, մասնավորապես 17 գյուղ Արտաշատի տարածաշրջանում, 6 գյուղ Արարատի տարածաշրջանում, 5 գյուղ Մասիսի տարածաշրջանում: Կատարվել է շուրջ 2 մլրդ 116.5 մլն դրամի աշխատանքներ: Արդյունքում նշված գյուղերը ապահովված են անխափան ջրամատակարարմամբ:

- ՀԲ-ի կողմից իրականացվում է Լանջազատի և Մխչյանի բուժ.ամբուլատորիաների կառուցումը՝ 60 –ական մլն դրամ արժողություններով: Սկսվել է Արտաշատի հիվանդանոցի վերակառուցման աշխատանքները՝ շուրջ 1 մլրդ 700 մլն դրամ արժողությամբ: Իրականացվել է Լանջազատ գյուղի ավտոճանապարհի 208 կմ հատվածի ասֆալտապատման աշխատանքներ շուրջ 268 մլն դրամ արժողությամբ:

- Հայ Օգնության Ֆոնդի միջոցներով իրականացվել է Զանգակատուն համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները՝ շուրջ 31 մլն դրամ արժողությամբ:

- Շվեցարական ‘Կանայք հանուն առողջության և առողջ ապրելակերպի’ Հասարակական կազմակերպության միջոցներով 2014թ.-ից իրականացվում է Դիտակի դպրոցի վերանորոգման աշխատանքները 80 մլն դրամ ընդհանուր արժողությամբ, 2015 թ. ընթացքում իրականացվել է շուրջ 33 մլն դրամի ներդրում::

- Կամրջակ հասարակական բարեգործական կազմակերպության միջոցներով իրականացվել է Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատան վերանորոգման աշխատանքները՝ 36 մլն դրամի և Բարձրաշեն համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները 15.2 մլն դրամի:

- FAO միջազգային կազմակերպության կողմից 290.0 հազ ԱՄՆ դոլար է ներդրվել Դարակերտ գյուղում գործող բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնում սերմնաբուծության զարգացման համար: Ներկայումս ընթանում են հոսքագծերի տեղադրման աշխատանքները: Ներդրումները կավարտվեն 2016թ:

- Փրկեք երեխաներին կազմակերպության /ԱՄՆ՝ (USAID)/ կողմից իրականացվել է <<LIFE>> ծրագիրը (Կենսամակարդակի բարելավում, զբաղվածության խթանման միջոցով) - ծրագրի իրականացման համար ծախսվել է 3.5 մլն դրամ:

-<<Առաքելություն Հայաստան>> Հասարակական Կազմակերպության միջոցներով կազմակերպվել է Արարատի մարզում ծերերի սպասարկում - 12.9 մլն դրամի: